ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ ԲԱՆԱՎԵՃԻ

02.09.2021 18:15

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 05.08.2021թ. թիվ 159-Լ որոշման «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2021 թվականի սեպտեմբերի 12-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգի 5-րդ կետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**) Պալատի նախագահի թեկնածուների բանավեճի անցկացման համար ապահովում է դահլիճ և այլ պայմաններ:

Բանավեճը կանցկացվի **2021 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 19:00-ին** ք.Երևան Իտալիայի փողոց 1 հասցեում գտնվող Կոնգրես հյուրանոցի Պիկասո կոնֆերանս սրահում:

Բանավեճը կվարի Պալատի ներկայացուցիչը:

Բանավեճի են հրավիրվում Պալատի նախագահի բոլոր թեկնածուները՝ Սիմոն Բաբայանը, Թամարա Պողոսյանը և Գևորգ Գյոզալյանը:

Բանավեճի անցկացման ընդհանուր պայմաններն են՝

1. Թեկնածուներին կտրամադրվի մինչև 30 րոպե ժամանակ իրենց ծրագիրը ներկայացնելու համար.
2. Թեկնածուներին հարցեր կտան ներկա փաստաբանները, մյուս թեկնածուները, վարողը.
3. Մուտքը ազատ է բոլոր փաստաբանների համար.
4. Բանավեճն առցանց կհեռարձակվի.
5. Բանավեճի ընթացքում արգելվում է միմյանց վիրավորելը: Վիրավորանք պարունակող հարցերը կհանվեն վարողի կողմից:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })